ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 21.02.2017թ. ԹԻՎ 101-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 2 մարտի 2017թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>

Ա. Խաչատրյան ԻԾ պետ

Ա. Ղազարյան ԿԿ բաժնի պետ

<u>Հանձնաժողովի քարտուղար</u>

Գ. Սարգսյան ՊԳՀԾ մասնագետ

Նիստին մասնակցում էր <<Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն>> ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Դ. Միերյանը

ՊԳՀԾ պետ Վ.Չիլինգարյանը նիստին չէր մասնակցում

<u>Օրակարգ՝</u>

1. *<<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(1)-17>>* ծածկագրով ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և համապատասխանող գնահատված հայտերի բացում.

2. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում:

ԻԾ պետ Ա. Խաչատրյանը հրապարակեց սույն գնման առարկայի նախահաշվային գինը՝ 1960000 ՀՀ դրամ:

Հայտ ներկայացրած մասնակիցների տվյալներն են՝ <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ (ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք 1, հեռ. 094444005) և <<Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն>> ՊՈԱԿ (ք. Երևան, Մ. Խորենացու 162ա, 1-ին հարկ, հեռ. 010574453, 010574406):

Արձանագրվեց, որ <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ կողմից հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է գնման ընթացակարգի հրավերին համապատասխան:

Այնուհետև հանձնաժողովը բացեց <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ ծրարը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին և հրապարակեց <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ գնային առաջարկը՝ 1960000 ՀՀ դրամ:

Արձանագրվեց նաև, <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ-ն հայտով արդեն իսկ ներկայացրել է <<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(1)-17>> ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

<<Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն>> ՊՈԱԿ-ի ներկայացրած ծրարի ուսումնասիրության ընթացքում պարզվեց,

որ ծրարի վրա գրված է՝ <<չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը>> բառերը, որը չէր համապատասխանում *<<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(1)-17>>* ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 5-րդ բաժնի 5.3 կետի պահանջներին:

Հանձնաժողովը քննարկման արդյունքում, պարզաբանում ստանալու նպատակով, հեռախոսային կապի միջոցով (010285328) դիմեց <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ, որտեղից ստացավ պատասխան, որ նման դեպքերում հայտը ենթակա է մերժման:

Հանձնաժողովը, ղեկավարվելով *<<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(1)-17>>* ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 5-րդ բաժնի 5.3 կետի պահանջներով և հաշվի առնելով <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի ստացված պարզաբանումը, միաձայն որոշեց՝ մերժել <<Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն>> ՊՈԱԿ-ի ներկայացրած հայտը՝ ծրարը գնման ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ, և ծրարը օրենքով սահմանված կարգով վերադարձրեց մասնակցին:

Հանձնաժողովը միաձայն որոշեց.

1.Սույն ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ-ին:

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել << *ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(1)-17>>* գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը,

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 10.03.2017թ. ժամը 11.30 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ա. Խաչատրյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Ղազարյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար